<<ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆ.
ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ
077 625662

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ 18

<<09>> <<06>> 2025թ.
№ 0-47

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՄԵԽԱԿՅԱՆԻՆ

Հարգարժան Պարոն Մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ «Բաղրամյանի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ում առկա է **դասվար /16դասաժամ/ , մաթեմատիկա /25 դասաժամ/, ինֆորմատիկա /2դասաժամ/, թգհզ /7 դասաժամ/, տեխնոլոգիա /3 դասաժամ / ,պատմություն /9 դասաժամ/, զինվորական ղեկավարի /զինղեկ/ (1 դրույք) ՆԶՊ (4 դասաժամ )** առարկաների ուսուցչի թափուր տեղ :

Կից ներկայացվում է հայտարարության տեքստը:

Դպրոցի տնօրեն՝ Ն.Տոմիկյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի /Բաղրամյան համայնք, գ.Բաղրամյան Պ.Սևակ 18/
դասվար /16 դասաժամ/ , մաթեմատիկա /25 դասաժամ/, ինֆորմատիկա /2 դասաժամ/, թգհզ /7 դասաժամ/, տեխնոլոգիա /3 դասաժամ / , պատմություն /9 դասաժամ/, զինվորական ղեկավարի /զինղեկ/ (1 դրույք) ՆԶՊ (4 դասաժամ ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար.

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի հունիսի 9-ից մինչև 20-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի հունիսի 23-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի <<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Արմավիրի մարզ,Բաղրամյան համայնք, գ.Բաղրամյան Պ.Սևակ 18 :
Տեղեկությունների համար զանգահարել (077) 62-56-62 հեռախոսահամարով:

***<<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրենություն***